ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ՝
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ 063 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ԿԱՐԾԻՔ

Հայկ Արթուրի Ծատուրյանի՝ «Խորհրդարանի սահմանադրական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հայկ Արթուրի Ծատուրյանի թեկնածուական ատենախոսության թեման վերաբերում է ժամանակակից աշխարհում կարևորագույն դերակատարություն ունեցող ինստիտուտի՝ խորհրդարանի սահմանադրական կարգավիճակի հետ կապված արդիական և հրատապ մի շարք հիմնախնդիրների:

Ինչպես հայտնի է, խորհրդարանը հանդիսանում է սահմանադրական իրավունքի հնագույն ինստիտուտներից մեկը, որի նկատմամբ անդադար աճում է ինչպես գիտական, այնպես էլ հասարակական և քաղաքական հետաքրքրությունը: Նշվածը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը, որտեղ սոցիալ-տնտեսական և քաղաքական բարեփոխումների կենսագործման, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների ընդունման, խորհրդարանական կառավարման ձևի սահմանման և այդ կարգով ընտրությունների անցկացման արդյունքում իր ակտիվ գործունեությունն է ծավալում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ նոր հայկական պետականության համապետական և համազգային կարևորագույն ինստիտուտներից մեկը:

Սույն ատենախոսական աշխատանքի ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ այն իրենից ներկայացնում է ամփոփ և ամբողջական գիտական հետազոտություն, որում հեղինակի կողմից արվել են գիտական վերլուծության և հանրային քննարկման կարիք ունեցող բարդ հարցադրումներ, լուսաբանվել են առաջնահերթ և հրատապ լուծում ակնկալող մի շարք հիմնահարցեր, ինչպես նաև դրանց շուրջ առաջադրվել են հայեցակարգային նոր մոտեցումներ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հեղինակին հնարավորություն է ընձեռել կանխորոշել հետազոտման նպատակը, այն է՝ Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանի սահմանադրական կարգավիճակի բովանդակության հիմնական կողմերի և դրսևորումների համակարգային ուսումնասիրությունը, իշխանությունների բաժանման համակարգում վերջինիս տեղի և դերի հստակ նախանշումը, ինչպես նաև կատարված ուսումնասիրությունների հենքի վրա համապատասխան տեսական վերլուծությունների իրականացումը և գործնական առաջարկությունների ձևակերպումը, որոնք ուղղված են հայկական պառլամենտարիզմի ամրապնդմանը, զարգացմանը և կայացմանը:

Ատենախոսության թեմայի հետազոտման նպատակի իրագործման համատեքստում աշխատանքի հեղինակի կողմից առաջադրվել են յոթ խնդիրներ, որոնց տրվել են հիմնավոր պատասխաններ:

Ըստ այդմ, հետազոտության նպատակն ու խնդիրները ներկայացված են հնարավորինս հստակ, իսկ աշխատանքում արված հետևություններն ու առաջարկությունները գերազանցապես հիմնված են օգտագործված տեսական ու նորմատիվ նյութերի վերլուծության և անձնական դատողությունների վրա: Ընդ որում, աշխատանքն ունի անհրաժեշտ աղբյուրագիտական հիմք, հեղինակը բավարար չափով օգտվել է թե՛ հայրենական, թե՛ արտասահմանյան մեծաքանակ տեսական աղբյուրներից, իրավական փաստաթղթերից և գործնական այլ նյութերից, որոնք էապես հարստացրել են ատենախոսության բովանդակությունը:

Պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսությունը սահմանադրական իրավունքի գիտության ոլորտում խորհրդարանի սահմանադրաիրավական կարգավիճակի հետազոտմանն ուղղված հաջողված համակարգային փորձ է, որում քննարկված հարցերն այս կամ այն չափով արտացոլում են ստացել տարբեր գիտնականների աշխատություններում: Սակայն թեև հետազոտության առարկայի հետ կապված որոշ հարցեր հանդիսացել են ինչպես տեսաբանների, այնպես էլ պրակտիկ աշխատողների ուսումնասիրությունների առարկա, այնուհանդերձ, ներկայումս սույն թեման դեռևս շարունակում է մնալ հետաքրքրական, արդի, նաև՝ որոշ առումով խնդրահարույց:

Սույն ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է նրանում, որ աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո առաջին համալիր փորձն է խորությամբ հետազոտելու և բացահայտելու Ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակն ամբողջությամբ և դրա մի շարք ասպեկտներ առանձին վերցրած՝ հաշվի առնելով վերջինիս ձևավորման առանձնահատկությունները, զսպումների և հակակշիռների համակարգում ունեցած գործառութային նշանակությունը, օրենսդրի կողմից իրավական մշտադիտարկման և խորհրդարանական վերահսկողության, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների՝ որպես յուրահատուկ կարգավիճակ ունեցող սուբյեկտների կողմից իրականացվող վերահսկողության առանձնահատկությունները:

Ատենախոսության բովանդակության անմիջական արտացոլումն են հանդիսանում պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք, ինքնատիպ, գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված լինելով հանդերձ, նաև շարադրված են հակիրճ և բավարար հստակությամբ, ներկայացնում են աշխատանքում արված բովանդակային հիմնական շեշտադրումները: Պաշտպանության ներկայացվող թվով հինգ դրույթներով հիմնավորված է հետազոտության թե՛ գիտականությունը, թե՛ նորույթը:

Անդրադառնալով ատենախոսության կառուցվածքին՝ հարկ է, մասնավորապես, նկատել, որ ընտրված է աշխատանքի ողջամիտ կառուցվածք և ծավալ: Աշխատանքը շարադրված է լեզվական բոլոր կանոնների պահպանմամբ, պատրաստված և կազմված է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան: Ընդ որում, ատենախոսության կառուցվածքը (ներածություն, երկու գլուխ՝ դրանցում ընդգրկված թվով 6 ենթագլուխներով, եզրակացություն և օգտագործված գրականության ցանկ) հնարավորություն է տվել բավարար մակարդակով ներկայացնել թեմային վերաբերող հրատապ հարցադրումներն ու արդիական հիմնախնդիրները:

Ատենախոսական հետազոտության տեսական և գործնական նշանակությունը խիստ անհրաժեշտություն է սահմանադրական իրավունքի (ինչպես նաև առանձնապես և առավելապես՝ պառլամենտական իրավունքի) գիտության հետագա զարգացման համար: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ աշխատանքի առնչությամբ առկա են նաև որոշ նկատառումներ և դիտարկումներ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

1. Հեղինակի կողմից ատենախոսության ներածությունում որպես մեթոդաբանական հիմք, ի թիվս այլնի, նշված է նաև պատմական մեթոդը: Միաժամանակ, ատենախոսության առաջին գլխի «Խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի տեսական բնութագիրը» վերտառությամբ ենթագլխում ներկայացված է ինչպես ընդհանուր առմամբ աշխարհում, այնպես էլ Հայաստանում այդ ինստիտուտի ձևավորման պատմությունը: Մասնավորապես, աշխատանքի 13-րդ, 25-26-րդ էջերում որոշ չափով շարադրված են 1918 թվականից հետո Հայաստանում խորհրդարանի ձևավորման մի քանի դրվագներ, ինչպես նաև 1773 թվականին Հակոբ ու Շահամիր Շահամիրյանների կողմից կազմված «Որոգայթ փառաց» վերտառությամբ սահմանադրական փաստաթղթում խորհրդարանի վերաբերյալ տեղ գտած որոշ դրույթներ, սակայն դրանք շատ ընդհանրական բնույթ են կրում և մակերեսային են ներկայացված: Մինչդեռ, նմանաբովանդակ աշխատանքի շրջանակներում պատմահրավական և պատմահամեմատական մեթոդների առավելագույնս արդյունավետ գործածումը և ըստ այդմ՝ Հայաստանում պառլամենտի ծագումնաբանության հնարավորինս խորքային ուսումնասիրությունը, այդ ինստիտուտի ձևավորման և կայացման մանրամասն պատմական ակնարկի ներառումը սույն գիտական աշխատանքում կարող էր առավել արժեքավոր դարձնել վերջինիս տեսական նշանակությունը և ապահովել դրա գիտագործնական կիրառելիությունը:

2. Ատենախոսության շրջանակներում պաշտպանության ներկայացված դրույթներում առկա են ձևակերպումներ, որոնք ենթադրում են հեղինակի կողմից աշխատանքում և հատկապես դրա եզրակացության մեջ ոչ միայն տեսական բնույթի վերլուծությունների և հայեցակարգային բնույթի եզրահանգումների ներկայացում, այլ նաև խորհրդարանի սահմանադրահրավական կարգավիճակի առնչությամբ

առաջադրված գիտական մոտեցումների շուրջ արված ուսումնասիրության արդյունքներով ՀՀ Սահմանադրության և (կամ) գործող օրենսդրական ակտերի՝ սահմանադրական կամ այլ օրենքների կատարելագործմանն ուղղված գործնական կոնկրետ առաջարկությունների շարադրում:

Մինչդեռ հեղինակի կողմից նման մոտեցում կա՛մ չի դրսևորվել, կա՛մ դրսևորվել է ոչ լիարժեքորեն, օրինակ՝ պաշտպանության ներկայացված 5-րդ դրույթի (այն է՝ մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող վերահսկողական լիազորությունների արդյունավետության բարձրացման անհրաժեշտության) կապակցությամբ աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում (էջ 101-111) և եզրակացության 10-րդ կետում (էջ 117) առկա է գործնական առաջարկություն, որն այս կամ այն չափով հիմնավորված է, սակայն կարիք ունի կոնկրետացման և մշտական հանձնաժողովների կողմից իրականացվող վերահսկողական լիազորությունների առաջարկվող շրջանակների հստակ ուրվագծման: Իսկ որոշ դեպքերում պաշտպանության ներկայացված այլ դրույթների և աշխատանքում կատարված այլ ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա հեղինակի կողմից չեն ներկայացվել Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված գործնական նշանակություն ունեցող կոնկրետ առաջարկներ, որոնք հնարավորության դեպքում պետք է ներառեին նաև համապատասխան իրավական ակտում հեղինակի գնահատմամբ անհրաժեշտ լրացումների և (կամ) փոփոխությունների ինչպես ընդհանուր հայեցակարգը, այնպես էլ դրանց հնարավորինս հստակորեն ձևակերպված տեքստային բովանդակությունը:

3. Աշխատանքն ամբողջությամբ, այդ թվում նաև՝ օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, դատական ակտերի և մասնագիտական գրականության ցանկը, ինչպես արդեն նշվել է, հիմնականում ձևակերպված են սահմանված կանոններին և խմբագրական պահանջներին համապատասխան, սակայն, այնուհանդերձ, օգտագործված գրականության ցանկում առկա են որոշ թերություններ և բացթողումներ, մասնավորապես՝ մի քանի աղբյուրներ լիարժեք չեն ներկայացված, օրինակ՝ գրականության ցանկի թիվ 29, 87, 94, 110, 118 և մի քանի այլ համարակալումների ներքո վկայակոչված աղբյուրներում նշված չէ դրանց էջերի քանակը: Միաժամանակ օգտագործված գրականության ցանկի՝ «Դատական ակտեր» անվանումը կրող ենթաբաժնում (էջ 120) թվարկված են դատական գործերի անվանումներ, սակայն հստակորեն նշված չէ, թե որ դատարանի կայացրած ակտի մասին է խոսքը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի կամ այլ մարմնի: Ընդ որում, ՄԻԵԴ վճիռների պարագայում մեծամասամբ բացակայում է նաև վճռի կայացման ամսաթվի վերաբերյալ որևէ նշում:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է փաստել, որ վերը շարադրված նկատառումները կրում են մասնակի բնույթ և որևէ կերպ չեն կարող նսեմացնել

աշխատանքի ընդհանուր դրական արժեքը: Ատենախոսությունը պատրաստված է պատշաճ գիտական մակարդակով, իսկ հիշատակված դիտարկումներն առավելապես կրում են բանավեճային բնույթ և ենթակա են լրացուցիչ քննարկման:

Սեղմագրի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, իսկ ատենախոսության հիմնական դրույթները բավարար չափով արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում:

Այսպիսով, Հայկ Արթուրի Ծատուրյանի՝ «Խորհրդարանի սահմանադրական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունն ամփոփ և ավարտուն գիտական հետազոտություն է, համապատասխանում է նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին, կատարված է բարեխղճորեն և բարձր մակարդակով, ունի գիտագործնական զգալի նշանակություն, ուստի, գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Հ.Ա.Ծատուրյանն արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների
թեկնածու՝ Ա.Գ. Սարգսյան

Ա.Գ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար, բ.գ.թ.՝ Ռ.Ս. Կասաբաբովա
15-ը հուլիսի 2020թ.